

արևադարձներուն օրերը իմանալու համար, իրենց տաճարին առջև առանց ծածկի միջոցի մը մէջ քարէ սիւն մը կանգնած էին. այս սիւնը շրջանակի կեդրոնը դրուած էր, և իր ոտքէն դէպ 'ի արևելք և արևմուտք, գիծ մը քաշուած էին, որ ցորեկը որոշեալ կէտերու վրայ սեան շուքէն կարուելով, արևադարձներուն մօտ ըլլալը կ'իմացնէր: Յայտնի է որ այս արևապաշտ ժողովուրդներուն քով, շատ զոդիակոսներ պիտի գտնուէին. և կը յիշուին անոնցմէ շատերը որ թէ շինուածքին նիւթովը, թէ մեծութեամբ և թէ աշխատանքով նշանաւորը էին: Այս բանս կը հաստատուի Մոնղէզուամայի առ Քորդէզ զբրկած ընծաներուն ցանկէն, որուն մէջ նշանուած են երկու կլոր (զոդիակական) ավսէներ, որոնցմէ մէկը ոսկիէ էր՝ միւսը արծրթէ, երկուքն ալ կառքի անուոյ չափ մեծ: Անոնցմէ մէկն հիանալի քանդակագործութեամբ աշխատուած էր, ծաղիկներ և կենդանիներ ներկայացընելով. Գորդէզի զինուորները գտան նաև կուադէմոզինի պարտէզին ջրհորին մէջ գեղեցիկ արև մը, ինչպէս այն ատեն կ'անուանէին: Պէնվէնուզոյ Չելլինի այս զոդիակոսներէն մէկ քանին տեսնալով հիացաւ: Աւելորդ է ըսելը որ այն ամեն բաները որ ոսկիէ և արծրթէ էին շատոնց կորան:

Մեքսիկոյ գտուած զոդիակոսը քարէ է, և գտուեցաւ 1790<sup>ն</sup>, աւերակաց տակ. շատերը ասոր վրայօք գրած են, մասնաւորապէս Հումպոլթ, որուն գրածը միայն բաւական է զմեզ համոզելու Ամերիկացւոց աստղաբաշխական հրմտութեանը վրայ: Այս քարէ զոդիակոսը ծակոտկէն երկաթակճէ (պաղաղ) մը կտրուած և Մեքսիկոյ փոխադրուած էր, բայց որոշուած տեղը զնելու մօտ՝ զանիկայ բռնող կապերը կտրուելով՝ ընկաւ լճին մէջ, ուր կորան նաև քրմապետն և ուրիշ անձինք: Անձինքը կորան, բայց զոդիակոսը ջրէն հանուելով փոխադրեցաւ Հուլիոյսթրոգլիի տաճարը, ուր պատերազմի գերեաց անողորմ զոհերովը իր տանախմբութիւնը կատարուե-

ցաւ. այս բանս 1512<sup>ն</sup> եղաւ, Գորդէզին և իր ընկերացը հասնելէն քանի մը տարի առաջ: Հիմայ այս զոդիակոսը, արդէն շատ մաշած, Մեքսիկոյի միջնաբերդին մէջ է, օդին ամեն վաստուց ենթակայ: Երանի թէ ամեն կարելի ջանք ըլլուէր՝ մերձակայ և անտարակոյս ապականուած ենէ ազատելու՝ այնպիսի նշանաւոր քաղաքականութեան հետաքրքրական մնացորդը, որուն նման շատ քիչ հետք թողած է:

Սպանիոյ հին, միջին ու ներկայ ժամանակաց պատմութիւնը.

(Տես էրես 172)

Հին ժամանակս: — Սպանիոյ նախկին բնակիչքն եղան իբերացիք և կելտք, որք ըստ Դիոդորի Սիկիլիացւոյ յետ ընդ երկար պատերազմաց միաբանեցան երկիրը մէջերնին բաժնելու, նաև դաշնադրութեք իրարու հետ խառնուեցան, և տեղ տեղ մի և նոյն ժողովուրդը ձեւացան: Կելտք հիւսիսային և արևելեան կողմերը ստացան. իբերացիք ալ հարաւային և արևմտեան մասերը գրաւեցին. իսկ կելտիբերացիք 'ի միջին բընակեցան: Քաղաքականօրէն անհամար ցեղերու բաժնուած ըլլալով երկիրը՝ և լեբանց պարերով 'ի բնէ կտրուած ըլլալով՝ ընդդիմակալութեան զարմանալի հանճարովի հանդերձ չկրցաւ ետ մղել յաջորդաբար վաճառականութեան սիրով և արծաթի և ոսկոյ հանքերը պեղելու փափաքով իր վրայ յարձրկողները: Փիւնիկեցիք և Յոյք գաղթականութիւններ հաստատեցին հոն ծովեզերաց մօտ. առաջիններն 'ի հարաւոյ ի կողէս կամ Գատիքս 1100<sup>էն</sup> սկսեալ Գարտէիա, Հիսպալիս կամ Սելիլիա, Մալակա, Գորտովա, և այլն. և երկրորդները հիւսիսային արևմտեան կողմէն 'ի Հոդոս կամ Հոդաս՝ կառուցեալ 'ի Հոդացւոց 900<sup>ն</sup> ատենները, Սաբունտոս կամ Մուրվիէտոյ (Գաղթականութիւն Զալիւնիսացւոց), Լամպու-

րիոն կամ Ամպուրիաս (Գաղթականութիւն Մարտիկոյ) , և այլն : Բայց կարքեդոնացիք Ձ դարուն կաղէսի հրաւէրն իրենց շահաւոր ընելէն ետքը բովանդակ հարաւային ծովափանց տիրապետելու համար , առաջին պունիկեան պատերազմէն ետքը ուզեցին Սիկիլիոյ մէջ ըրած կորուստնին Սպանիոյ մէջ դարձեալ ձեռք բերել և յաջողեցան : Ամիլկար Բարկաս ինն տարուան մէջ Թերակղզւոյն ամբողջ հարաւային և արևմտեան մասը նուաճեց և Լուսիտանիացւոց դէմ ըրած զժբազդ մարտակուռոյն մէջ ինկաւ մեռաւ 237-229 : Աստորուբալ իր փեսան ու յաջորդը գընաց յարևելից նոր կարբեդոնը (կարթագինէ) հիմնեց և ինչուան էպրոյ առաջ գնաց , ուր Հռովմայեցիք արգիլեցին զինքը 227<sup>ն</sup> դաշնադրութեամբ . յորում պայմանեալ էր նաև զէն չհասցընել իրենց դաշնակից Սագունտոսքաղաքին որ այս գետին հար . կողմը կ'իյնար : Աննիրալայ այս քաղաքս պաշարելն ու գրեթէ ամբողջապէս կործանելը 219<sup>ն</sup> պատճառ տուաւ երկրորդ պունիկեան պատերազմին , որով կարքեդոնացիք կորուսին զՍպանիա և Հռովմայեցիք ստացան : 197<sup>էն</sup> սկսեալ երկու նահանգ բաժնուելով 'ի վերուստ 'ի հիւսիսոյ Տուրոյի և էպրոյի , և վարով 'ի հարաւոյ , երկայն ժամանակ ժողովրդեան չարքաշութեամբն ու քաջութեամբը ինքզինքը պաշտպանեց և միայն իր ցեղերուն անմիաբանութեամբը ընկճուեցաւ , բազմաթիւ և կիրթ թշնամւոյն պողարիւն անգթութեամբըն ու վատ դաւաճանութեամբը : Երբոր վիրիաթ անունով լուսիտանիացի հովիւ մը կրցաւ քիչ մը ատեն դարձեալ այս բաժանեալ ժողովուրդները միաբանել , հետզհետէ վեց զօրավարաց յաղթեց և Հռովմայ հետ հաւասար շահով դաշինք դրաւ . կեպիոն զինքը սպաննել տուաւ 140<sup>ն</sup> , և Սկիպիոն 133<sup>ն</sup> բովանդակ թերակղզւոյն տիրեց . որ 'ի զուրջանաց դարձեալ զլուխ վերցընելու պաշտպան և թիկունք կենարով արսորեալ Սերտորիոսին ազնուապետակա-

նաց կողմնակցութեանը դէմ , զոր Սիլլա զօրացուցեր էր . 81-72 : Միայն Պիրենեան պարալբրին ցեղերը կիսով անկախ մնացին , նոյն իսկ Օգոստոսի իրենց դէմ ըրած յաղթական արշաւանքէն ետքը . 26-21 : Իրեն հրամանաւ Սպանիա իրեք նահանգի բաժնուեցաւ 26 տարի Ն . Ք . զոր յետոյ վեսպասիանոս չորս նահանգի վերածեց . յետոյ չորրորդ դարուն մէջ հինգ նահանգ եղաւ , և այս հինգ նահանգները՝ Բալէարեանց և Տէնգիտանեան Մաւրիտանիոյ հետ կազմեցին Սպանիոյ թեմը , որ էր կելտաց իրեք կուսակալութիւններէն մէկը :

Լուկանոս , Սենեկայք , Մարտիալէս և Տրայիանոս կայսրը սպանիացի էին :

Միջին դար . Հռովմէական և արաբական առաջին արշաւաւնք . — Սպանիա ալ կելտաստանի նման առաջին հռովմէական երկիրն եղաւ ուր գերմանացի Պէրպէրք թագաւորութիւններ հաստատեցին . 409<sup>էն</sup> 'ի վեր Սուեվեանք արևմտեան հիւս . կողմը հաստատուեցան , և 'ի կայիցիա և Գարրաքոնէզի մէկ մասին մէջ . Ալանք յարևմուտս և միջին կողմերը , ի Լուսիտանիա և 'ի կարթագինէ . վանտալք հարկողմը և 'ի Բետիկէ : Քանի մը տարի ետքը , 412<sup>էն</sup> 416 , Աղուլիեան վիսիգոթք Գաղալոնիոյ վրայ յարձըկեցան , որ Հռովմայեցւոց էր տակաւին . և երկայն ժամանակ բովանդակ թերակղզին իրենց հնազանդեցաւ : Վալլիայի իշխանութեան տակ 417<sup>ն</sup> վանտալաց թագաւորութիւնն 'ի շահ հռովմէական կայսրութեան կործանուելէն ետքը , որ թէպէտ 421<sup>ն</sup> դարձեալ կանգնեցաւ՝ բայց քիչ ատենէն 429<sup>ն</sup> Ափրիկէ փոխադրեցաւ , և Ալանացն իսկ կործանելէն ետքը՝ որ անհետ եղաւ ան ատեն 'ի պատմութենէ , իրաւ է որ Գաղալոնիան թողուցին ուր հաստատուած էին նախ և զնացին կելտաստանի հար . առևմտ . կողմը , զոր տուաւ իրենց Ռնորիոս կայսրը 419<sup>ն</sup> . բայց այսու կրցան յետոյ քաջասիրտն Ենրիկեայ հետ բովանդակ Սպանիան ձեռք ձգել , 466-

469 : Մուելագ սրածայր երկիրն ալ որուն նախ չէին տիրած , 585<sup>ն</sup> ձեռքերնին ինկաւ . բայց արդէն նոյն ժամանակէն իրենց տկարանալն սկսեր էր : Կրովիս յաղթական հանդիսանալով 'ի վուիլլէ 507<sup>ն</sup> կելտաստանի մէջ ունեցած ամենայն կալուածնին յափշտակեր էր , ի բաց առեալ զՍեպտիմանիա : Յուստինիանոս յոյն կայսրը երկու թագաւորական գահուն ցանկացողաց մէջ յարմար և շահաւոր ժամանակը գտեր էր և զբաւեր էր զվալենցիա և զԲետիկէ արևելեան : Եթէ 624<sup>էն</sup> առաջ վիսիգոթք կրցան Յոյները հալածել , դար մը ետքը նոյն յաջողութիւնը չունեցան ընդդէմ Արաբացւոց . Խսերէսի մարտա կուռով 711<sup>ն</sup> ամբողջ թագաւորութիւնը մահմետականաց ձեռքն անցաւ , և հազիւ կրցան անկախութեան պաշտպան կեցող քանի մ'անձինք Պելագիոսի առաջնորդութեամբն ազատութեամբ յԱստուրիա մնալ :

Պայքարումն Արաբացւոց եւ Ֆրիստունից : — Սպանիա նախ և առաջ Արաբացւոց ընդարձակ պետութեանը մարդ ըլլալով , զոր 750<sup>էն</sup> սկսեալ Ապպասեանք կը կառավարէին՝ բաժնուեցաւ իրենցմէ 756<sup>ն</sup> , և իւմիիատ Ապտիւռահմ առանձին տէրութիւն մ'ըբաւ , Արևմտից կամ Գորտովայի խալիփայութեան : Այս խալիփայութեան պայծառութիւնն ու փառաւորութիւնը երկու դարի չափ արգելք չեղաւ Աստուրեայց փոքրիկ տէրութեան անդր քան զՏուրոյ զեա տարածուելու , և 792<sup>ն</sup> Ովիէզոյի թագաւորութիւն ըլլալու և յետոյ 913<sup>ն</sup> Լէոնի . ուրիշ կողմանէ Պեպինոս կարճն նուաճեց զՍեպտիմանիա և կարողս Մեծն Էպրոյի հիւս . կողմն երկու մարզիչութիւն (Marches) հաստատեց , որոնցմէ մէկը թ զարուն Պարցհելոնայի անկախ կոմսութեան այլափոխեցաւ , և միւսը 'ի սկիզբն ժ զարուն 905ին Նաւարրայի թագաւորութեան : Այս երեքին վրայ կ'աւելնային արդէն , ոչ այնչափ իրական՝ որչափ անուանական աւագութեամբ , Լէոնի և Նաւարրայի թագաւորները , Գասպիլիոյ և Ա-

րակոնայի կոմսութիւնները , որ խալիփայութեան քսանի չափ աննշան իշխանութեանց բաժնուելէն վերջը 976-1034 , թագաւորութիւն կանգնեցին և թագաւոր եղան 1034<sup>ն</sup> Նաւարրայի Մեծին Սանչին երկու որդիքը , որոնց հայրը 1028<sup>ն</sup> ժառանգ եղեր էր այս երկու թագաւորութիւններէն առաջնոյն կոմսութեան : Մահմետականք 1085<sup>ն</sup> ինչուան Գաղոյ հալածուելով և զԳոլետոյ կորսնցրնելով Նաւարրայի հզօր ազգատոհմին պատճառաւ՝ որոնք Լէոնի թագաւորութիւնը ստանալով 1037<sup>ն</sup> հինգ քրիստոնեայ տէրութիւններէն չորսին տէր եղեր էին , իրենց օգնութեան կանչեցին միլեռանգն Ալմիրավեանքը , որը Մարոքի տէրութիւնն ու քաղաքը հիմնած էին : Ափրիկէի այս վայրագ թափառականները հաւասարապէս վիստակար եղան թէ արաբացի և թէ քրիստոնեայ Սպանիոյ . 1086<sup>ն</sup> յաղթական ելլելով 'ի Զէլագա , նախ և առաջ կարող սեպուեցան բովանդակ թերակողին ընկճելու : Բայց և Սպանիացիք իրենց կողմանէ բաւական նեցուկ և թիկունք դրտան . գաղղիացին Հենրիկոս տը Պուրկոներ և անոր որդին Ալփոնսոս Ալխարհակալը (el Conquistador) նոր թագաւորութիւն մը հաստատեցին , որ է Բորգուզալի թագաւորութիւնը , 1034-1139 , երբ ամուսնութեամբ մը Լէոնի և Գասպիլիոյ թագաւորութիւնը նոյն ազգատոհմէն ուրիշ ճիւղի մը կ'անցնէր 1126<sup>ն</sup> , և երբ Արակոնայի գահը Պարցհելոնայի գաղղիական ազգատոհմին կը վիճակէր , 1137<sup>ն</sup> : Մինչ դար մ'ետքը 1234<sup>ն</sup> Շամբանի կոմսերը Նաւարրայի թագաւոր եղան՝ քրիստոնեայ Սպանիոյ հարստութեանն գաղղիական սերունդքն էին որ տեղացի հարստութեանց սկսած անկախութիւնը ամբողջացուցին բովանդակապէս : Ալմոհատեանք Ափրիկէի մէջ ի կէս ժԳ դարուն Ալմիրավեանց յաղթելով՝ ուզեցին իրենց պէս տիրել Սպանիոյ , բայց 1212<sup>ն</sup> Լաս-Նավաս-տէ Գոլոզայի մեծ յաղթութեամբ՝ ամենայն վտանգք որ նախ անկախութեան վնասել կը սպառնային՝ բարձան , և քրիս-

տոնեայք ամեն կողմանէ մահմետական, նաց երկիրներուն մէջ յառաջեցին. յարեւելից Արակոն մեծցաւ իրենց փնասովը տուժիւք Բալէարեանց և վալենցայի թագաւորութեան. 'ի միջոցի, Ս. փերտինանտոս Գ. Գասդիլեան՝ մօրաքեռորդի Ս. Լուզովիկոսի 1217-52, տիրապետեց բովանդակ հուստաքիվիբի (Գորտովա, Մուրցիա, Յաէն, Սեւիլիա). յարեմտից, Ալփոնսոս Գ. Լուսիտանիացին 1249-53 Ալկարվեանքն ըստացաւ. միայն մաւրիտանացի թագաւորութիւն մը մնաց որ է Կրանագայինը, և զայն 'ի սուր փորձեցին կանգուն պահել Մերլինեանք յաջորդք Ալմոհատեանց 'ի Մարոք 'ի վերջ ժԳ և յսկիզբն ժԳ դարուց. 1340<sup>ե</sup> Գարիֆայի մօտ Ռիոյ Սալագոյի ափանց վրայ բոլորովին յաղթուեցան: Եթէ Կրանագա դիմակալեց ինչուան ժեզարուն վերջը, պատճառն ան էր որ մերձակայ երեք տէրութիւնք՝ Արակոն, Գասդիլիա և Բորդոգալ, ուրիշ գործոց և ձեռնարկութեանց և կամ՝ քաղաքական պայքարմանց զբաղած էին, որով չկրցան անընդհատ առաջ տանիլ Սպանիոյ հին խաչակրութիւնը: Գասդիլիա անդադար ներքին հերձուածներով կը կեղեքէր. Արակոն կը յափշտակէր զՍիկիլիա Անժուի ազգատոհմին ձեռքէն, 1282<sup>ե</sup>, Բիզացուց ձեռքէն զՍարտենիա, 1323-26, կը ստանար զՆաբոլի 1435<sup>ե</sup>: Բորդոգալ ժեզարուն սկիզբէն Ափրիկէի ծովեղերաց վրայ տիրապետութիւններ ընելու և նոր երկիրներ դանելու զբաղած էր: Վերջապէս Գասդիլեան իզպալելայի փերզինանտոս Արակոնացոյն հետ ամուսնանալը 1467<sup>ե</sup> և յաջորդաբար երկու ամուսնաց այս երկու աշխարհաց թագաւորութեան գահակալելը, 1474—1479, Կրանագայի թագաւորութեան անկումը պատճառեցին 1492<sup>ե</sup> և նոր Սպանիոյ սկզբնաւորութիւնը:

Մի և նոյն ժամանակի մէջ որ սպանիական պետութիւնք կը ձեանային կը մեծնային, իրենց կառավարութիւնը կանոնաւորեալ էր. վիսիգոթաց՝ Դուե-

տոյի ժողովոցն և խառն ժողովոց, որոնք մի և նոյն անունը պահեցին արարական տիրապետութենէն ետքը, յաջորդեցին ժԲ դարուն Գորդէս ժողովները, երբ քաղաքաց երեսփոխանները երկու արտունութեան պատուէրներն ստացան: Այս ժողովները կը սահմանաւորէին մասնաւորապէս թագաւորական իշխանութիւնը, զոր արդէն իսկ նուազեցուցած էին քաղաքաց առանձնաշնորհութիւնները (fueros), և Սէզանդարայի, Գալազրավայի, Ս. Յակոբայ, Ավիզի կրօնաւորական և զինուորական կարգաց իշխանութիւնը, որը հիմնուած էին ժԲ դարուն ըստ նմանութեան յԱրևելս եղածներուն:

Նոր ժամանակք. 1. Փէրոխիսաևտոս Ռադափաւա և Ալուրիոյ ազգութունը: — ՅԱրակոնա և իրմէ կախում ունեցող իտալական երկիրներու մէջ (Սիկիլիա, Սարտենիա, Նաբոլի), 'ի Գասդիլիա և Կրանագայի թագաւորութեան մէջ, փերտինանտոս Ռադափաւա մինչդեռ թագաւորաց իշխանութիւնը կ'ընդարձակէր՝ նաև աւելցուցեր էր յայսկոյս Պիւրենեանց, Սպանիական Նաւարան 1512<sup>ե</sup>. և յայնկոյս Ռուսսիլեոնը, արակոնացի իշխանաց հին կալուածը՝ որ քիչ մը ատեն իրենց ձեռքէն կորցեալ էր, 1493<sup>ե</sup>. Միջերկրականին միւս կողմը Ափրիկէի շատ քաղաքներ (Օրան, Պուճիա, Դրիբոլի, 1509-10): Գոլոմպոս ալ իրեն ժամանակը զլմերիկա գտաւ (1432) ուր սկսեր էին գաղթականութիւններ ձեանալ, և որուն քիչ ատենէն նաև մեծ մասին տիրեցին (Մեխիգոյ, Բերու և այլն): Այս ամենը ժառանգութիւն եղաւ 1516<sup>ե</sup> իր թուանը (petit fils) կարոլոս Աւստրիացոյն (կարոլոս Հինգերորդ) որ արդէն իր հօրը փրիպպոս Գեղեցկի մահուամբ ժառանգեր էր 1506<sup>ե</sup> Ստորին Նահանգները և Ֆրանշ կոմսութիւնը, որուն նաև քիչ ատենէն հայրական պապուն Մաքսիմիլիանոս Ա՞ մահուամբ ժառանգութիւն ինկաւ 1519<sup>ե</sup> Գերմանիոյ մէկ մասը և կայսրութեան տիտղոսը: Եթէ

Տաճիկը դարձեալ ձեռք ձգեցին իրեն թագաւորութեան ժամանակ զԴրիբողի և Պուճիա 1551-55, ինքն անոր փոխարէն Միլանու չրջակայ երկիրներն ստացեր էր 1535էն և իր որդին փիլիպպոս Բ. անոնց վրայ աւելցուց նաև Բորդոզալը 1580էն: Սպանիական պետութիւնը ԺՉ դարուն մէջ ուրեմն առաջին հզօր և վտանգաւոր տէրութիւնն էր: Բայց կարողոս Հինգերորդի սերընդոց ժամանակ փութով անշքանալով կերպով մը հետևեցաւ իրեն վրայ թագաւորող ազգատոհմին: Փիլիպպոս Բ-ի անգիջողութիւնն ու բռնակալ վարչութիւնը Ստորին - Նահանգաց բաժնուելուն պատճառ եղաւ, յորմէ ելաւ Միացեալ - Գաւառաց հասարակապետութիւնը, 1566-1648. նաև ինքնին Բորդոզալ իրեն լուծը թօթափեց հանդերձ իրեն գաղթականներով՝ փիլիպպոս Գ-ի ժամանակ 1640էն. Արգուա, Ռուսսիլիոն, Հար. Ֆիանտրա, Ֆրանչկոմսութիւնը հետզհետէ Գաղղիոյ ձեռքըն ինկան, 1640, 42, 67, 74, որոնք ձգեցին դաշնադրութե Պիւրենեանց, Էքս - լա - Շաբէլի և Նիմէկի 1659, 68, 78:

Մի և նոյն ժամանակի մէջ նաև Սպանիոյ ժողովուրդը, երկրագործութիւնը, ճարտար արուեստներն ու վաճառականութիւնը կը նուազէին և կ'իյնային: Բազմաթիւ Սպանիացւոց արտաքին նահանգներու մէջ պանդխտիլը զանոնք վարելու և բռնելու համար, և բազդախնդրութեան համար Ամերիկա երթալը, փիլիպպոս Բ-ի հարստահարող քաղաքագիտութիւնը, փիլիպպոս Գ-ի ժամանակ Լերմեայ դքսին պատճառաւ մէկդի ձգուելով, զոր դարձեալ փիլիպպոս Գ-ի ժամանակ Օլիվարէս ձեռք առաւ. հաւատաքննութեան արքունական ատենին խստութիւնքն՝ որ փերտինանտոս Ուղղափառէն ետքը ամենայն սաստիկ միջոցներու ձեռք կը զարնէր, թերակղզւոյն մէջ բռնութեամբ կրօնական միութիւն պահելու համար. այս ամենայն պատճառները Սպանիոյ մէջէն շատ բազուկներ և անբաւ հարըս.

տութիւն հեռացուցեր էին. 1492էն Հրէից արսորուիլը, ինչպէս նաև մաւրիտանացի սերնդէ երող ամենայն բընակչաց արտաքսիլը 1609-10 զրկեր էին զինքը իր ամենէն աւելի գործունեայ և ճարտար ժողովրդենէն. ասոնց հետ մէկտեղ նաև հարաւայնոց անհոգութիւնը և ձեռագործական աշխատութեանց դէմ ունեցած նախապաշարմունքնին, Ամերիկայի մեծագին մետաղաց տրուած նախապատուութիւնը՝ քան թէ երկրի և ճարտարութեան իրական գանձուցը. Մետոյայի հօտից ներեալ ասպատակութիւնքը, անթիւ երկիրներու անմշակ կամ ամենաքիչ մշակեալ ըլլալը, անհանճար և ընկճող ելեմտական մատակարարութիւն մը. ահաւասիկ այլ և այլ կործանման պատճառներ որոնցմով չմնաց 'ի Սպանիա 1700էն՝ երբ 6,000,000 բնակիչ ունէր միայն, ոչ հասարակաց գանձ, ոչ բանակ զինուորական և ոչ ծովային զօրութիւն:

Սպանիոյ մէջ ԺՉ դարուն և ԺԷ-ի առաջին մասին մէջ փայլեցաւ Սրբուհին թերեզիա վեհ սրբութեամբ՝ ի հոգևորս (mysticisme), և Սերվանդէս՝ անհամեմատ կատակարանութեամբ. նշանաւոր եղաւ Ալունզոյ տէ Էրչիլլա փորձած Արաւգանեան դիւցազներգութեամբը՝ որուն մէջ տեղ տեղ ազէկ յաջողած է. անուանի եղան պատմագրաց դասէն Մէնտոզա, Մարիանա, Հէրրէրա և այլն. և երկու թատերագակ բանաստեղծք Լորէ տէ վէկա և Բալտէրոն, որոնք իրենց մտաց անսպառ բեղնաւորութեամբը մեծ արդիւնք ստացան. նոյն դարուն մէջ նկարչութիւնը փառաւորողքն ալ էին տէ վէլասգուէս, տէ Մուրիլլոյ, տէ Զուրպարան, տէ Ռիպէրա: Բայց 'ի վերջ ԺԷ դարուն կարծես թէ գրականութիւն և արուեստը Սպանիոյ մէջ մարելու վրայ էին՝ ինչպէս այլ ամենայն ինչ, երբ նոր հարստութիւն մը թագաւորական աթոռը ելաւ:

2. Պոռչպոնի ազգատոհմը. — Կարողոս - Հինգերորդի վերջին սերնդեանը մահուամբը 1700էն, սպանիական

պետութիւնը անցաւ Լուդովիկոս ԺԳ-ի մէկ թոռանը, փիլիպպոս Ե-ի բայց Պուրպոնի ցեղին այս կրտսեր ճիւղը եւրոպական պատերազմէ մ'ետքը կրցաւ հաստատուիլ՝ որ Ուրբէխի դաշնագրութեամբ լմրնցաւ, 1713<sup>է</sup>, անդամատութեամբ մը՝ որուն դէմ Ալպերոնի քանի մը տարի ետքը 1717 — 19, 'ի զուր փորձեց բողոքել: Իր թերակղզոյն նահանգացը վերածուելով 'ի բաց առեալ զՓիլարալդար, և Ամբրիկայի գաղթականութեանցն և Բալէարեանց՝ 'ի բաց առեալ զՄինորքա, գոնեա թագաւորութիւնը 'ի ներքուստ քիչ մը վիճակը բարելաւցուց: Նոյն հարստութեան առաջին թագաւորները՝ փիլիպպոս Է. փերտինանտոս Զ. կարոլոս Գ. կարգաւորեցին բանակը, զօրացուցին ծովային ուժը, ելումուտքը շտկեցին և պաշտպան եղան վաճառականութեան և արուեստից: Երբ 1788<sup>է</sup> վերջին թագաւորը մեռաւ, Սպանիոյ ժողովուրդը տասը միլիոնն անցեր էր, Մինորքա դարձեալ ընկճուած 1781<sup>է</sup> ինչպէս նաև Լուիզիանա 1763<sup>է</sup>: Բայց այս յառաջադիմութիւնք տեղի տուին ուրիշ նոր անկման մը առջև, և արգէն կարոլոս Գ-ի ժամանակ Սպանիա կորսնցուցած էր զՕրան ու 1782<sup>է</sup> Ալճերիացուց ձգեր էր Ս. Գոմինիկոսի սպանիական մասն ու Լուիզիանան Գաղղիոյ պահանջանացը պատճառաւ 1795 — 1801. Երբոր դութեան կղզին ալ Անգղիոյ թողեր էր 1802<sup>է</sup> երբ Նաբոլէոնի կողմանէ իր եղբորն Յովսէփ Պոնաբարդի Սպանիոյ թագաւորական գահը ելլելովը ծագեցաւ թերակղզոյն մէջ անկախութեան սոսկալի պատերազմ մը, 1808 — 13: Գորդէս ժողովքը չուզելով Գաղղիական թագաւորի մը գահը ելլելը 1812<sup>է</sup> Սահմանադրութեամբ 1791<sup>է</sup> խռովայուզեալ Գաղղիոյ օրինադրութեանցը կը հետևէին. գերագոյն տէր ազգը կը հրատարակէին և թագաւորութիւնը՝ որ երկու դարէ 'ի վեր գրեթէ միահեծան էր Սպանիոյ մէջ, իր իշխանութեանը մէջ սաստիկ չափուորեալ տեսակ մը ժառանգական նախագահութիւն մը կ'ը-

նէին: Գաղթականութիւնք ալ իրենց կողմանէ 1808<sup>է</sup> 'ի վեր մայր հայրենեաց տազնապն ու զմբաղը պատեհ առնելով ջանացին ազատութիւննին ձեռք ձգել: 1814<sup>է</sup> փերտինանտոս Է. դառնալով բացարձակ իշխանութեան հաստատուած ժամանակ՝ քիչ ատեն նէն տեսաւ խռովարար մասին 1820<sup>է</sup> դարձեալ 1812<sup>է</sup> Սահմանադրութիւնն իրմէ պահանջելը և Գորդէս ժողովոյն համահաւաքումը, և գաղղիական արշաւանքը պէտք եղաւ 1823<sup>է</sup> զինքն իրեն արտուճութեանցը մէջ հաստատելու համար: Իսկ արտաքոյ ստիպուեցաւ որ Նոր — Ալխարհին գաղթականութիւնները վերստին ստանալու ակնկալութենէն հրաժարի: Քաղաքական սկզբանց պայքարմանը յաջորդեց իր մահուամբ 1833<sup>է</sup> յաջորդութեան համար ծագած քաղաքական պատերազմ մը: Զօրութեամբ երկրին հին Սահմանադրութեանը և Գորդէս ժողովոյն 1789<sup>է</sup> ըրած որոշմամբ՝ որ հրատարակեցաւ 1830<sup>է</sup>, իզապէլլա Բ. իր դուստրը՝ մայր զշխոյին Մարիա — Գրիստինայի խնամակալութեանը ներքև թագուհի հրատարակեցաւ. 1834<sup>է</sup> խնամակալուհին արքունիական պայման (statut royal) անուամբ սահմանադրական Հրովարտակ մը հանեց, միջին սահմանաւ ընդ մէջ միահեծան վարչութեան և 1820<sup>է</sup> ազատ կառավարութեան. բայց Տոն Քարլոս՝ նորահասակ թագուհւոյն հօրեղբայրը իբրև անվաւեր քարոզեց 1789<sup>է</sup> գործը, և թագուհւոյն դէմ՝ ինքնիշխան — միապետ (auto-acordado) վրայ յեցաւ, որով փիլիպպոս Է. 1713<sup>է</sup> հաւանութեամբ Գորդէս ժողովոյն՝ իզական սեռը թագաւորելու իրաւունքէն զրկեր էր: Ասկէ արիւնահեղ կռիւ մը ծագեցաւ որ և վերջացաւ սոսկ 1839<sup>է</sup> պահանջողին բռնի հեռանալովը, և խռովարար կամ յառաջադիմութիւն ուղղմասին նորանոր փորձերովը ճղճղեցաւ, որ 1836<sup>է</sup> պահանջեց առ ժամանակ մի դառնալ 1812<sup>է</sup> դրութեան և յետագայ տարին սահմանադրութիւնն

աչքէ անցընել: Երկու անձինք մասնաւորապէս նշանաւոր եղան Իզապէլլայի Բ-ի գահը պաշտպանողներուն մէջ, Էսթարդէրոյ՝ որ 1839<sup>է</sup> դուքս Յաղթութեան կոչուեցաւ, և Նարվաէզ՝ անուանեալ դուքս վալենցիայի 1843<sup>է</sup>: Ապստամբութիւն մը 1840-43 պատճառ եղաւ որ Էսթարդէրոյ ինքնին ձեռք առնու Մարիա — Ֆրիստինայի խնամակալութիւնը. ուրիշ երկրորդ խռովութեամբ մը յետոյ հալածեցաւ ինքն 'ի Սպանիոյ, և այս՝ տարի մը առաջ կանխել առաւ թագուհւոյն օրինաւոր հասակաւորութիւնը, և այն ժամանակէն ինչուան 1851 միշտ երկրորդն եղաւ վարիչ գործոց տէրութեան. 1845<sup>է</sup> աւելի միապետական մտքով աչքէ անցընել տուաւ 1837<sup>է</sup> սահմանադրութիւնը: 1854<sup>է</sup> գինուորական ապստամբութիւնը դարձուց զԷսթարդէրոյ և յառաջադիմութիւն սիրողներն յիշխանութիւն, զոր չափաւորականը կորզեցին իրենց ձեռքէն. 1858<sup>է</sup> Օ' Տոննէլ իր ժողովականներով՝ որ այս կողմին բարակիմաստ մասերէն մէկն էր, յաջողութեամբ Մարզի պատերազմն 'ի գլուխ տարաւ (1859-60), և անկէ ետքը Սպանիա եւրոպական մեծ տէրութեանց կարգն անցաւ:

Այս վերջերս ալ՝ ինչպէս յայտնի է,

Սպանիա՝ յետ քանի մը տարի առաւել լազոյն ազատութեան և լաւազոյն յառաջադիմութեան սիրով ընդ երկար յուզուելէն ետքն այլ և այլ անգամ ընդունայն փորձերով, վերջապէս այս տարի դարձեալ գլխաւորապէս Բրիմ զօրավարին գործոյն շարժիչ ըլլալով բովանդակ ազգութեամբ և քաղաքք բողոքեց Պորպոնեանց ցեղին թոյլ ու յետամնաց կառավարութեան կերպին դէմ, և դրած պահանջողական պայմաններովը ստիպեց զթագուհին հեռանալու իր գահէն և օտար երկիր պանդրխտելու. ամենայն գլխաւոր քաղաքաց համար առ ժամանակեայ խնամատարութեան վարչութիւններ հաստատեց, և որ զարմանալին է Սպանիոյ համար և անշուշտ ցաւալին՝ իր հին և աստուածեանդն նախանձաւորութիւնը մտածելով, ամենայն կրօնից համարձակ ազատութիւն տուաւ, և արդ հետամուտ է արդի քաղաքականութեան կամացն համեմատ վերստին նոր սահմանադրութիւն մը հաստատելու, հանդերձ նորընտիր պայազատութեամբ թագաւորական գահուն:

Ի վերջոյ գնենք հոս Փերտինանտոսէն և Իզապելլայէն ետև Սպանիոյ գահակալող թագաւորաց անունները:

Գասդիիա	Սլոնիոնա
Իզապելլա . . . . . 1474-1504	Փերտինանտոս Ուղղափառ. 1479-1516 Խնամակալ Գասդիիոյ 1504էն մինչև 'ի յունիս 1506 սեպտեմբերէ 1506 մինչև իր մահը:
Ազգատուն	
Փիլիպպոս Ա. Գեղեցիկ, փեսայ Իզապելլայի իրապէս իշխանութիւնը 1506ին ձեռք ձգեց և իրեք ամիս ետքը մեռաւ:	Աստրիոյ
Կարոլոս Ա. (Կարոլոս Հինգերորդ) իր հաւուն Փերտինանտոսի խնամակալութեանը ներքև, — 1506 — 1516: Կը թագաւորէ միայն Սպանիոյ վրայ 1516ին.	Ստորին — Նահանգաց գահէն կը հրաժարի 1555ին և Սպանիոյ թագէն 1556ին:
	Փիլիպպոս Բ. . . . . 1556-1598
	Փիլիպպոս Գ. . . . . 1598-1621
	Փիլիպպոս Գ. . . . . 1621-1665
	Կարոլոս Բ. . . . . 1665-1700
Ազգատուն Պորպոնի	
Փիլիպպոս Ե. . . . . 1700	Փիլիպպոս Ե. երկր. անգամ. 1724-1746
Կը հրաժարի . . . . . 1724	Փերտինանտոս Զ . . . . . 1746-1759
Լուզովիկոս Ա. . . . . 1724	Կարոլոս Գ. . . . . 1759-1788

Կարողոս Դ . . . . . 1808  
 Կը հրաժարի . . . . . 1808  
 Փերտինանտոս Լ, թագաւոր հրատարակեալ 1808ին և զրեթէ իսկոյն հրաժարելու ստիպեալ :  
 Յովսէփ Պոնարայի . . . . . 1808-1813

Փերտինանտոս Լ, դարձեալ աթոռը կ'ելլէ . . . . . 1815-1833  
 Իզապելլա Բ . 1835 . կ'ամուսնանայ 1846ին մօրաքեռորդույն Տոն Ֆրանսուայի հետ . կը ստիպուի գահէն հեռանալու 1868ին :

### Ի ԾՆՈՒՆԴ ՏԵՍՈՒՆ

Որպէս խարակ ի ծագաց  
 Բարձու լերին առապար  
 Անկեալ թափով դըրըրդման  
 Թաւալազըր սըրաւար ,  
 Դ' ոլորտապտոյտ ափափայս  
 Ճախր ի հովիտըն յորայս  
 Առեալ՝ մըխի եւ մընայ .

Անդ ուր անկաւն անյարիր  
 Կայ ծանրաբեռն յիւր կուտակ .  
 Եւ ոչ դարուց ի շըրջել  
 Ի վաղեմին անդր ի ծագ  
 Տեսանէ զակն արեւու ,  
 Թէ գօրութիւն ձեռընտու  
 Ոչ վերառնուլ զինք ջանայ .

Սապէս անկեալ որդին հէք  
 Կայր յանցանացն առաջին ,  
 Յօրէ յորմէ խոստացեալ  
 Ցասումն անճառ , դառնագին  
 Արկ զինքն յաղէտըս ցաւոց ,  
 Ուստ զիւրըն խրոխտ պարանոց  
 Չմարթէր այլ եւրս կանգնել :

Ո՛վ յատելի ծընելեաց ,  
 Ո՛վ ոք ուրեք էր կարող  
 Ասել առ Սուրբըն սըրբոց  
 Յանմատչելին՝ Ներեա , թող .  
 Կըռել նոր դաշն յաւիտեան ,  
 Եւ զգըթոխոց յաղթական  
 Առնուլ զաւարն և կորզել :

Ահա Մանուկ մեզ ծընաւ  
 Ահա տըւաւ մեզ Որդի .  
 Դողան ոսոխ գօրութիւնք  
 Շարժման յունիցն առ ահի .

Նա զձեռն առ մարդ կարկառէ ,  
 Որ ողջացեալ և յառնէ  
 Քան ըզնախկին փառաւոր :

Յեթերական կայենից  
 Բըղխէ աղբիւր վայրիջեալ  
 Ընդ ապալերըս փըշոց  
 Կենդանացայտ ծաւալեալ .  
 Կողերք ըզմեղըր ծորեն  
 Եւ տատասկաց փոխարէն  
 Փըթթի ծաղիկ անդանօր :

Ո՛վ Դու Որդի էակից  
 Մըշտընջենին , միշտ իւրեւ ,  
 Ո՛ր դար կարէ քեզ ասել  
 Ըսկիզբն եղեւ քո ինեւ .  
 Որ եսդ յերկնից լայնասփիւ  
 Անպարագիծ դու ի ծիր ,  
 Չոր բանք քոյին ըստեղծին .

Եւ Դու զգեհնուլ յանձն առեր  
 Հողազանգուած զայս մարմին .  
 Ձինչ արժանիք , որ շընորհ  
 Յայքան պատիւ զնա հանին .  
 Թէ ի խորհուրդս իւր թաքուն  
 Յաղթող գտանի թողութիւն ,  
 Անհուն է յոյժ գութ Նորին :

Ծընաւ Նա՛ յսօր . յեփրաթա  
 Ի նըկատեալ անդ տեղին  
 Կոյս ոք վեհազն ել գընաց  
 Իսրայելի փառք տոհմին ,  
 Բըղի որդւով այնպիսեաւ .  
 'Սա իւրոց խոստմանց Նա ծընաւ  
 Երբմէ սպասեալն էր՝ եկաց :